# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

5 հունիսի 2026թ. թիվ 592

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԵՎ Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ
ԿԱԹՆԱՋՈՒՐ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանի 2026 թվականի հունիսի 4-ի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ  եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին ս/թ հունիսի 5-ին մեկ օրով գործուղել Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայր՝ սուբվենցիոն ծրագրով իրականացված ներհամայնքային ճանապարհների տուֆապատման աշխատանքները դիտարկելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ախդա Շիրինյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վահրամ Ղարսայանին և ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2026թ. հունիսի 5
ք.Վանաձոր